ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/199

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյան Ռուդոլֆի (պետական հաշվառման համար՝ 271.1089143

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.12.2019թ. թիվ 26/26-1/20760-2019 գրությամբ Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.12.2019թ. թիվ ՊՆ/02/2817-2019 գրության հիման վրա, 16.12.2019թ. թիվ 26/26-1/20760-2019 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին (հետայսու նաև՝

Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/199 ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, վերջինս ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/29 ծածկագրով ընթացակարգի 46-րդ չափաբաժնով վառոցքի կոճ 53-3705000 կոդը և Ճ-116 տեխնիկական բնութագրով նշագրումը չեն համապատասխանում իրար, վառոցքի կոճ 53-3705000 կոդին համապատասխանում է Ճ-114-ը, որի վերաբերյալ Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը հայտնել է Պատվիրատուին՝ խնդրելով պայմանագրի նախագծում ուղղել 53-3705000 կոդը հանձնման-ընդունման ընթացքում խնդիրներից խուսափելու նպատակով, մինչդեռ Պատվիրատուն հրաժարվել է կատարել համապատասխան փոփոխություն:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.12.2019թ. թիվ ՊՆ/02/2817-2019 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչված «Գեորգի Մարտիրոսյան» Ա/Ձ-ն հրաժարվել է սահմանված ժամկետում պայմանագիր կնքելուց:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/199 ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/199 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

1. ՍՑ-ՆԳ-2019/199 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը Ընթացակարգի թիվ 4,6,24, 37, 39, 45, 46, 56, 64 և 67-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշել է Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

5. Պատվիրատուն 19.11.2019թ. Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին ուղարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/29» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

6. Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը 25.11.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/29 ծածկագրով ընթացակարգի 46-րդ չափաբաժնի մասով վառոցքի կոճ 53-3705000 կոդը և Ճ-116 տեխնիկական բնութագրով նշագրումը չեն համապատասխանում իրար և առաջարկել է պայմանագրի նախագծում նշված (53-3705000) կոդը հանձնման-ընդունման ընթացքում խնդիրներից խուսափելու նպատակով:

7. Ի պատասխան վերը նշված գրության Պատվիրատուն 26.11.2019թ. Մասնակցին ուղղված գրությամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին հաղթող մասանկից է ճանաչել վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով և ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնությամբ ներառվել է պայմանագրում, ուստի հնարավոր չէ պայմանագրում կատարել փոփոխություն:

8. Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը 28.11.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով այն փաստը, որ 46-րդ չափաբաժնի մասով վառոցքի կոճ 53-3705000 կոդը և Ճ-116 տեխնիկական բնութագրով նշագրումը չեն համապատասխանում իրար, ուստի հրաժարվում է պայմանագիրը կնքելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2019թ. թիվ 26/26-1/20760-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.12.2019թ. թիվ ՊՆ/02/2817-2019 գրությունը և կից փաստաթղթերը, Մասնակցի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը Ընթացակարգի թիվ 4,6,24, 37, 39, 45, 46, 56, 64 և 67-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշել է Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Պատվիրատուն 19.11.2019թ. Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին ուղարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/29» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը 25.11.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/29 ծածկագրով ընթացակարգի 46-րդ չափաբաժնի մասով վառոցքի կոճ 53-3705000 կոդը և Ճ-116 տեխնիկական բնութագրով նշագրումը չեն համապատասխանում իրար և առաջարկել է պայմանագրի նախագծում նշված (53-3705000) կոդը հանձնման-ընդունման ընթացքում խնդիրներից խուսափելու նպատակով:

Ի պատասխան վերը նշված գրության Պատվիրատուն 26.11.2019թ. Մասնակցին ուղղված գրությամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին հաղթող մասնակից է ճանաչել վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով և ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնությամբ ներառվել է պայմանագրում, ուստի հնարավոր չէ պայմանագրում կատարել փոփոխություն:

Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանը 28.11.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով այն փաստը, որ 46-րդ չափաբաժնի մասով վառոցքի կոճ 53-3705000 կոդը և Ճ-116 տեխնիկական բնութագրով նշագրումը չեն համապատասխանում իրար, ուստի հրաժարվում է պայմանագիրը կնքելուց:

Այսպիսով Ընթացակարգի հրավերի N 1 Հավելվածով 46-րդ չափաբաժնի մասով սահմանվել է Վառոցքի կոճ-53-3705000 Ճ-116, Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ:

Մասնակիցը Հավելված 1.1-ով՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 46-րդ չափաբաժնի մասով առաջարկել է Վառոցքի կոճ-53-3705000 Ճ-116, Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ:

Պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով 46-րդ չափաբաժնի մասով սահմանվել է Վառոցքի կոճ-53-3705000 Ճ-116, Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/29 ծածկագրով ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև Պայմանագրի նախագծի Տեխնիկական բնութագիրը 46-րդ չափաբաժնի մասով արձանագրում եմ, որ նշված չափաբաժնով գնման առարկայի՝ Վառոցքի կոճի 53-3705000 կոդը չի համապատասխանում Տեխնիկական բնութագրով նշագրված Ճ-116 տեխնիկական ցուցանիշին, որպիսի պայմաններում պայմանագրի կնքումը Մասնակցի համար պայմանագրի կատարման փուլում կառաջացներ արհեստական խոչընդոտներ, որոնք իրենց հերթին կհանգեցնեին բացասական հետևանքների:

Ուստի հաշվի առնելով վերոհիշյալ փաստերը՝ գտնում եմ, որ Մասնակիցը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ պայմանագրի կնքումից հրաժարվելը հետևանք է եղել այն հանգամանքների, որոնք բխել են հրավերից, սակայն ի հայտ են եկել պայմանագրի կնքման փուլում, հետևաբար Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.12.2019թ. թիվ 26/26-1/20760-2019 գրությամբ Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**